# ОБЪЯВЛЕНИЕ

## об изменениях, внесенных в заключенный договор

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 27-ого октября 2021 года в договор № DD-GHAPDzB-20/50 (далее- Договор), заключенный 22 октября 2020 года в результате процедуры закупки под кодом DD-GHAPDzB-20/50 организованной с целью приобретения униформы для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа / Соглашение/, содержащего внесенное изменение.

**Причина возникновения изменения:** договор был заключен на основании части 6 статьи 15 Закона РА «О закупках»: выделены финансовые средства на поставку 20-и комплектов от количества товара, подлежащего поставке по Договору.

**Описание изменения:** Приложение N 2 Договора под заглавком <ГРАФИК ПЛАТЕЖЕЙ> утвержден в новой редакции согласно Приложению N 1 Соглашения.

Обоснование изменения: пункты 8.5, 8.13 Договора.

Заказчик: **Судебный департамент**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/50» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/50 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2021 թվականի հոկտեմբերի 27-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա. Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ենթակա քանակից 50 լրակազմի մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն համաձայնագրի հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5, 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

## 22.10.2020թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/50» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«27» «10» 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Խաչիկ Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սուրեն Ազատյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 22.10.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/50» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով թվով 50 (հիսուն) լրակազմի մատակարարման համար ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայն ագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 2 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝
Խ. Ղազարյան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ***
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
Հ/Հ՝ 1510023294810100
ՀՎՀՀ՝ 00803554
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ս. Ազատյան

/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված N 1**
**«27» «10» 2021թ. կնքված N 3 համաձայնագրի**

*(Հավելված N 2*
*« 22 » « 10 » 2020թ. կնքված*
*N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/50» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | |
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 35811170/1 | Համազգեստ | 2100000 | 2100000 | 2100000 | 2100000 | 7350000 | 7350000 | 7350000 | **7350000** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
եկավարի պաշտոնակատար՝
Խ. Ղազարյան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ***
ք. Երևան, Ձ. Սարկավագի 157
Հ/Հ՝ 1510023294810100
ՀՎՀՀ՝ 00803554
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ս. Ազատյան

/ստորագրություն/Կ.Տ